«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ» Հայ-Բրիտանական
Աուդիտորական-Խորհրդատվական Ընկերություն
Լիցենզիա - ԱԾ N: 041.
Երևան, Խորենացու 27ա / 1
հեռ. (374 10) 541272, 560852

"LONDON BUSINESS GROUP" British-Armenian
Auditing-Consulting Company
licence ԱԾ N: 041
27a Khorenatsi, 1, Yerevan.
Tel.: (37410) 541272, 560852

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի
Մասնակիցներին

31 մարտ 2009 թ.

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի՝ հետագայում Ընկերություն, կից հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2009 թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2009 թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, դրամական հոսքերի, սեփական կապիտալի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների, «ՀՀ Արժեթղթերի Շուկայի Մասին» օրենքին և համապատասխանում են ներդրումային ընկերությունների համար Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվներին և այլ իրավական ակտերին:

Ընկերության ներքին աուդիտի գործունեությունը և ներքին հսկողության համակարգը համապատասխանում են «ՀՀ Արժեթղթերի Շուկայի Մասին» օրենքի և Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, Կենտրոնական Բանկին ներկայացվող հաշվետվությունները ամբողջական են և արժանահավատ:

Աուդիտոր՝ *Գառնիկ Ալեքսանյան*

Տնօրեն՝ *Տիգրան Զորյան*

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ»
"LONDON BUSINESS GROUP"
01233655